# Պաղեստինի ճանաչումը որպես Մերձավոր Արևելքում եվրոպական տերությունների ազդեցության կորստի ցուցիչ[1]

**ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 03.10.2025 թ.**


## Սեղմագիր

*ԱՌՎԱԿ-ի մեկնաբանությունն ուսումնասիրում է մի շարք արևմտյան երկրների, այդ թվում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից 2025 թ. սեպտեմբերին Պաղեստին պետության ճանաչման ալիքը: Նշվում է, որ այդ որոշումները պայմանավորված են ոչ այնքան մարդասիրական աղետը դադարեցնելու ցանկությամբ, որքան ներքաղաքական գործոններով, մասնավորապես՝ իսլամական ընտրազանգվածի ճնշումներով: Հիմնական թեզն այն է, որ Պաղեստինի ճանաչումը ոչ թե ուժի ցուցադրություն է, այլ հակազդակ քայլ, որը ցույց է տալիս Մերձավոր Արևելքում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի իրական ազդեցության կորուստը: Այն տեղի է ունենում Միացյալ Նահանգների և Իսրայելի միտումնավոր քաղաքականության համապատկերում՝ Լևանտի տարածաշրջանից եվրոպական շահերը դուրս մղելու համար, այդ թվում՝ Սուեզի ջրանցքի այլընտրանքային նախագծերի (օրինակ՝ Բեն-Գուրիոնի ջրանցքի) միջոցով: Որպես եզրահանգում արձանագրվում է, որ այս դեմարշը ոչ միայն չկարողացավ զսպել Իսրայելին, այլև ազատ արձակեց նրա ձեռքերը՝ հնարավորինս արագացնելով ՄԱԿ-ի ճգնաժամը, ինչը խարխլում է հենց եվրոպական տերությունների գլոբալ կարգավիճակի հիմքերը:*



***Բանալի բառեր:*** *Պաղեստին, Իսրայել, ճանաչում, աշխարհաքաղաքականություն, Մերձավոր Արևելք, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ՄԱԿ, Սուեզի ջրանցք, Բեն-Գուրիոնի ջրանցք, Լևանտ:*


ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի սեպտեմբերյան նստաշրջանի ընթացքում մի շարք արևմտյան երկրներ, իրենց նախկին խոստումներին համապատասխան, պաշտոնապես ճանաչեցին Պաղեստին պետության անկախությունը: 2025 թվականի սեպտեմբերի 21-ին նման հայտարարությամբ հանդես եկան Միացյալ Թագավորությունը և Կանադան: Հաջորդ օրը նրանց միացան Ֆրանսիան, Անդորրան, Բելգիան, Ավստրալիան, Պորտուգալիան, Մալթան, Մոնակոն և Սան Մարինոն:

Այսպիսով, Եվրոպայում ի հայտ եկավ Պաղեստինի ինքնիշխանության կողմնակիցների մի փոքր թվային առավելություն: Պաղեստինը Եվրոպական պետություններից դեռ չեն ճանաչել Ֆինլանդիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Դանիան, Հունաստանը, Կիպրոսը, Իտալիան, Ավստրիան, Շվեյցարիան, Նիդեռլանդները և Գերմանիան: Պաղեստինամետ ճամբարին Կանադայի և Ավստրալիայի միանալն զգալիորեն նպաստել է պաղեստինա-իսրայելական հարցում արևմտյան հանրության նոր դիրքորոշմանը: Ակնհայտ է, որ այս պետությունները գործում էին Լոնդոնի հետ համահունչ՝ առաջնորդվելով համաշխարհային ամենակարևոր խնդիրների վերաբերյալ

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 02.10.2025 թ.:

Բրիտանական Համագործակցության միասնական դիրքորոշման պահպանման իրենց հանձնառությամբ:

Առաջին հայացքից՝ ճանաչման այս ալիքը միջազգային իրավական տեսանկյունից նշանակալից իրադարձություն դարձավ Պաղեստինի ժողովրդի համար՝ ապահովելով «*երկու պետություն*» հայեցակարգի կողմնակիցների ճնշող գերազանցությունն ուժերի գլոբալ հավասարակշռության մեջ: Հարկ է հատկապես նշել, որ նույնիսկ նախքան ճանաչման այդ ակտերը, ՄԱԿ-ի 193 անդամ երկրների մոտավորապես 2/3-ն արդեն ճանաչել էր Պաղեստինի ինքնիշխանությունը: Սակայն այս պահի դրությամբ ամենաէական փոփոխությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երկու մշտական անդամների միանալն է: Այսպիսով իսկ դա հանգեցրեց Անվտանգության խորհրդի ներսում այս հարցի շուրջ ԱՄՆ-ի փաստացի մեկուսացմանը, քանի որ Վաշինգտոնն անվանապես կորցրեց ԱԽ մշտական անդամների՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ավանդական աջակցությունը:

Մյուս կողմից, շատ փորձագետներ թերահավատություն են հայտնում Պաղեստինի պետականության ճանաչման գործնական նշանակության կապակցությամբ: Նրանք նշում են, որ վերջին հռչակագրերը չեն հստակեցնում նոր պետական կազմավորման սահմանները, որը, դեռ ավելին, չունի մայրաքաղաք և բանակ: Ավելին, *BBC*-ի վերլուծաբանների գնահատմամբ՝ անհնար է ձևակերպել, թե կառավարությունները «*ճանաչում*» եզրույթով կոնկրետ ինչ նկատի ունեն, եթե իսրայելական բանակը գործնականում ավարտում է իր կողմից Գազայի և Հորդանան գետի Արևմտյան ափի զավթումը՝ սադրելով դրանց բնակիչների զանգվածային տեղահանումը: Միևնույն ժամանակ, չկան ոչ հաստատված մեխանիզմներ այս գործընթացը կասեցնելու համար, ոչ էլ Թել Ավիվին արդյունավետ կերպով ստիպելու որևէ հեռանկար, որպեսզի նա ընդունի «*երկու պետություն*» հայեցակարգը: Այս լույսի ներքո Պաղեստինի ճանաչումն առաջին հերթին խորհրդանշական է և ոչ մի կերպ չի ազդի իրերի իրական վիճակի վրա:

Բրիտանական և ֆրանսիական հասարակություններում բանավեճ է սկսվել այս քայլի ուշացած լինելու վերաբերյալ: Երկու երկրներում էլ կառավարությանն առավել ակտիվորեն քննադատում են ձախակողմյան ուժերը, որոնք պնդում են, թե իշխանությունները միտումնավոր սպասել են, մինչև որ պաղեստինյան ինքնավարությունից գործնականում ոչինչ չմնա, բացի իսրայելական նոր բնակավայրերից: Այս առումով, շատ վերլուծաբաններ հակված են եզրակացնելու, որ Լոնդոնի և Փարիզի շարժառիթը պայմանավորված է ոչ այնքան Գազայում ցեղասպանության դադարեցմանն ուղղված իրական միջամտության անհրաժեշտությամբ (2025 թ. սեպտեմբերի 16-ին ՄԱԿ-ի անկախ հանձնաժողովն Իսրայելի գործողություններն արդեն իսկ որակել է որպես «ցեղասպանություն»), որքան ներքաղաքական հանգամանքներով: Որոշումն ընդունվել է այդ երկրների իսլամական բնակչության և նրանց աջակցող ձախ-ազատական քաղաքական ուժերի ճնշման ներքո:

Հատկանշական է, որ Միացյալ Թագավորությունում և Ֆրանսիայում ավանդաբար ուժեղ հրեական լոբբին ի զօրու չի եղել ազդել կառավարությունների որոշումների վրա: Ըստ *BBC-ի* տեղեկությունների՝ Մեծ Բրիտանիայի գլխավոր ռաբբի սըր Էֆրեմ Միրվիսը Դաունինգ Սթրիթին բազմիցս կոչ է արել «*հետաձգել*» Ճանաչման ակտը, սակայն Միացյալ Թագավորության իշխանությունները, ըստ երևույթին, աննախադեպ ճնշում են զգում իսլամական գործոնի կողմից, որն իր դիրքերն է ամրապնդում ինչպես կառավարությունում, այնպես էլ ընտրական դաշտում:

Միևնույն ժամանակ, կարծիք կա, որ Պաղեստինը ճանաչելու Միացյալ Թագավորության և Ֆրանսիայի քաղաքական որոշման վրա էապես ազդել է ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականությունը, որն ուղղված է այս տարածաշրջանի աշխարհաքաղաքական երկրապատկերի արմատական վերակազմավորմանը:

Վաշինգտոնը գործնականում Իսրայելին համապարփակ աջակցություն է ցուցաբերում Պաղեստինի ինքնավարությունը վերջնականապես կազմաքանդելու, Սիրիան, Լիբանանը և Իրաքը մասնատելու, Կարմիր ծովի տարածաշրջանում լարվածություն հրահրելու նրա նախաձեռնություններում, ինչը խաթարում է Եվրոպայի առևտրային հարաբերություններն ասիական երկրների հետ: «Արաբական հեղափոխությունների» շարանից հետո Միացյալ Թագավորությունը և Ֆրանսիան կորցնում են իրենց ազդեցությունը Լևանտի տարածաշրջանում, որը հաստատվել էր 1920 թվականին Սան Ռեմոյի խորհրդաժողովում հաստատված մանդատներով: ԱՄՆ-ի և Իսրայելի գործողությունները նպաստեցին ֆրանս-բրիտանական կապիտալի դուրս մղմանը տարածաշրջանից, որը, նույնիսկ Սիրիայի (1946 թ.) և Իրաքի (1932 թ.) ինքնիշխանություն ձեռք բերելուց հետո, Փարիզին և Լոնդոնին թույլ տվեց զգալիորեն ազդել նրանց ներքին և արտաքին քաղաքականության վրա: Ներկայումս Վաշինգտոնը և Թել Ավիվը նպատակասլաց ջանքեր են գործադրում Լևանտը եվրոպական տերությունների ավանդական քաղաքական և տնտեսական շահերի գոտուց վերջնականապես հեռացնելու ուղղությամբ:

ԱՄՆ-իսրայելական երկյակը զգալի հարված հասցրեց արևմտաեվրոպական առաջատար երկրների շահերին՝ հութիներին սադրելով շրջափակելու Բաբ էլ Մանդեբի նեղուցը: Սա փաստորեն կաթվածահար արեց Սուեզի ջրանցքով եվրասիական ծովային առևտուրը և փոխեց Աֆրիկայի շուրջ հիմնական բեռների հոսքերը՝ Եվրոպայում կտրուկ բարձրացնելով էներգապաշարների և այլ ապրանքների գները:

Մի շարք փորձագետներ կարծում են, որ հութիների հետ խաղաղության հասնելու Վաշինգտոնի և Թել Ավիվի չկամությունը իրանական հիմնախնդրի հետ կապ չունի: Կասկածներ են արտահայտվում նաև ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Եմենի «*օրինական*» կառավարության և շրջափակման վերացմանն ուղղված արշավում արաբական կոալիցիային աջակցելու անկարողության վերաբերյալ: Ըստ այդ գնահատականների, ամերիկա-իսրայելական երկյակի պասիվության իրական պատճառները կայանում են

նրանում, որ նրանք ցանկանում են ապահովել համաշխարհային առևտրում Սուեզի ջրանցքի դերի վերջնական անկումը՝ նախքան Իսրայելին կհաջողվի կառուցել Բեն-Գուրիոն ջրանցքը, որը Հնդկական օվկիանոսը նրա տարածքով կկապի Միջերկրական ծովի հետ:

Այս սցենարը ենթադրում է, որ նոր ջրային ուղու ավարտից հետո Եմենի հութիները կա՛մ կպարտադրվեն խաղաղություն հաստատել, կա՛մ Սանայի նրանց վարչախումբը կվերացվի միջազգայնորեն ճանաչված կառավարության ուժերի կողմից՝ ԱՄՆ-ի և Իսրայելի լիակատար ռազմական աջակցությամբ: Այս ծրագրի իրականացումը Թել Ավիվին թույլ կտա ապահովել բեռնափոխադրումների զգալի մասնաբաժինը, որը մինչ հութիների շրջափակումը կազմում էր համաշխարհային ծովային առևտրի 12%-ը և կոնտեյներային բեռնափոխադրումների մոտ 40%-ը: Իր հերթին, Վաշինգտոնը ռազմավարական վերահսկողություն ձեռք կբերի Արևելյան Միջերկրական ծովում և Հնդկական օվկիանոսի արևմտյան հատվածում, ինչը կբարդացնի Աֆրիկայում Չինաստանի տնտեսական առաջխաղացումն ու ծավալումը դեպի Եվրոպա:

Նման փոխդասավորության դեպքում Լոնդոնն ու Փարիզը կարող են դուրս մնալ Մերձավոր Արևելքի ապագայի ձևավորման գործընթացներից, ինչը հատկապես խաթարում է նրանց գլոբալ հավակնությունները՝ հաշվի առնելով այդ երկրների պատմական դերը Սուեզի ջրանցքի ստեղծման գործում:

Մեկ այլ գործոն, որը երկու եվրոպական միջուկային տերություններին դրդեց ճանաչելու Պաղեստինը, Իսրայելի աննախադեպ աշխուժացումն է Լիբանանում և Կիպրոսում: Ֆրանսիան, որն ավանդաբար համարվում էր լիբանանյան պետականության ճարտարապետը, այժմ ականատես է լինում երկրի ներքաղաքական հավասարակշռության խաթարմանը: Միևնույն ժամանակ, Միացյալ Թագավորությունը, Թել Ավիվի և Անկարայի միջև հարաճուն սրացման լույսի ներքո սպառնալիք է զգում Կիպրոսում իր ռազմական ներկայությանը (*Ակրոտիրի* և *Դեկելիա* ռազմակայաններ) և Արևելյան Միջերկրական ծովում իր ռազմավարական շահերին:

Ակնկալվում էր, որ Լոնդոնի և Փարիզի նախաձեռնությունը հակաարդյունավետ կլինի և Թել Ավիվին հավանաբար կդրդի ավելի կտրուկ դարձնել իր գործողությունները: Խնդիրը ոչ այնքան ԵՄ-ի և Միացյալ Թագավորության հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու Իսրայելի ծրագրերի մեջ է, որքան այն, որ Թել Ավիվը կարող է բոյկոտել ՄԱԿ-ը և հայտարարել կազմակերպությունից դուրս գալու մասին: Իսրայելի իշխանությունները քանիցս հայտարարել են այդ մասին՝ նման որոշումը փաստարկելով ՄԱԿ-ի ղեկավարության անկենսունակությամբ և ահաբեկչության դեմ «*իրական պայքարի*» համաձայնագրային պարտավորություններից նրա նահանջով: Պաղեստինի ճանաչումը, Գազայում ցեղասպանության մասին զեկույցը և Գլխավոր վեհաժողովում Բենիամին Նեթանյահուի ելույթը խանգարելու միջադեպը կտրուկ մեծացրել են նման քայլի

հավանականությունը: Գուցե մեկ այլ ժամանակ վերլուծաբանները թերահավատորեն կվերաբերվեին նման կանխատեսմանը, բայց հիմա, երբ ԱՄՆ-ում իշխանության ղեկին է Դոնալդ Թրամփը, նման զարգացումը միանգամայն սպասելի է:

Դ. Թրամփի արհամարհանքը ՄԱԿ-ի նկատմամբ հայտնի փաստ է: ԱՄՆ նախագահը, առիթը բաց չթողնելով, սեպտեմբերյան Գլխավոր վեհաժողովում քննադատել է կազմակերպությանը՝ մեղադրելով ճգնաժամերը լուծելու և պատերազմները կանխելու հարցում անկենսունակության և անօգնականության համար: Ինչ վերաբերում է Պաղեստինի ճանաչմանը, ապա ամերիկացի առաջնորդն այն որակել է որպես անհեռատես քայլ, որն ամրապնդում է ՀԱՄԱՍ-ի դիրքերը:

Այսպիսով, բավարար հիմքեր կան կարծելու, որ Միացյալ Նահանգները և Իսրայելը կարող են համատեղ հայտարարել կազմակերպությունից դուրս գալու մասին՝ նախապես արմատական բարեփոխումներ պահանջելուց հետո, ինչին անդամ երկրների մեծամասնությունն ակնհայտորեն պատրաստ չէ համաձայնել: Սա առաջին հերթին վերաբերում է Միացյալ Թագավորությանը և Ֆրանսիային, որոնց գլոբալ կարգավիճակը մեծապես ապահովված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում նրանց մշտական անդամակցությամբ: Ներկայումս մեծ թվով պետություններ հայտարարում են Անվտանգության խորհրդի բարեփոխումների և մշտական անդամության ընդլայնման անհրաժեշտության մասին: Հետևաբար, Լոնդոնը և Փարիզը կարող են կորցնել իրենց առանցքային դիրքերը:

Հաշվի առնելով Դ. Թրամփի վարչակազմի համակողմանի աջակցությունը Թել Ավիվին, դժվար է պատկերացնել, թե ինչ արդյունքի էին սպասում Լոնդոնը և Փարիզը՝ ՄԱԿ-ում կազմակերպելով իրենց հակահիսրայելական դեմարշը: Մի շարք ռուս փորձագետների կարծիքով՝ Պաղեստինի ճանաչումը Միացյալ Թագավորությանը և Ֆրանսիային զրկեց իրենց վերջին հաղթաթղթից, որը թույլ էր տալիս ազդելու Իսրայելի քաղաքականության վրա: Ճանաչման սպառնալիքն ավելի արդյունավետ գործիք էր, քան բուն այդ ակտը: Դրանից հետո Թել Ավիվը հայտարարեց Եվրոպայի թշնամանքի և ՄԱԿ-ի օրինականության կորստի մասին, որը, նրա կարծիքով, այլևս իրավունք չունի հրեական պետությունից պահանջելու կատարել իր բանաձևերը: Դրանով Լոնդոնն ու Փարիզը պարզապես արձակեցին Թել Ավիվի ձեռքերը և արագացրին այն պահը, երբ ՄԱԿ-ը կա՛մ կփլուզվի, կա՛մ հիմնովին կվերակազմավորվի ԱՄՆ-ի և Իսրայելի ճնշման ներքո:

Պաղեստինի ճանաչումը միայն ավելացրեց Գազայում զոհերի թիվը և սաստկացրեց ՑԱԽԱԼ-ի գործողությունները: Այն սուր ճգնաժամի հանգեցրեց բրիտանա-իսրայելական և ֆրանս-իսրայելական հարաբերությունները: Փորձագետների կարծիքով՝ բրիտանական և ֆրանսիական կառավարությունների միակ ձեռքբերումն ապագա ընտրություններում իսլամական ընտրազանգվածի աջակցության հեռանկարն էր (Ֆրանսիա) և իսլամական խմբավորումների բարեհաճությունն արտաքին քաղաքականության ուղեգծի նկատմամբ

(Մեծ Բրիտանիա): Սակայն հարցն այն է, թե, արդյոք, իսլամական համայնքի բարեհաճությունը կարելի՞ է «*ձեռքբերում*» համարել, թե՞ դա հրաժարում է ազգային ավանդական շահերից:

Վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ Մեծ Մերձավոր Արևելքը նոր վերակազմավորման դարաշրջան է թևակոխել, որտեղ ավանդական եվրոպական տերությունները կորցնում են իրենց նախկին ազդեցության մնացորդները: Այս միտումը հատկապես ցավալի է Ֆրանսիայի համար՝ հաշվի առնելով, որ դա նրա հետգաղութային գերիշխանության մայրամուտի համաշխարհային գործընթացի մի մասն է: Միացյալ Թագավորությունը կարող է դեռևս պահպանել վերահսկողությունն իր ազդեցության ավանդական գոտիների մեծ մասի վրա, սակայն Մերձավոր Արևելքում ամերիկա-իսրայելական փոխգործակցության հոլովույթը հետզհետե փոխարինում է ավանդական անգլո-սաքսոնական աշխարհաքաղաքական համագործակցությանը: Այստեղ նոր կարգ է ի հայտ գալիս, որը պետք է սպասարկի Դ. Թրամփի կողմից «*վիթխարի*» անվանված *IMEC* առևտրա-էներգետիկ երթուղու նախագիծը: Դրա ստեղծման գործընթացը կուղեկցվի ՄԱԿ-ի վերակազմակերպմամբ, որը նպատակ կունենա ոչ միայն զսպել Չինաստանին ու Ռուսաստանին, այլև արժեզրկել Եվրոպայի առաջատար դերը նոր աշխարհակարգում՝ մի դեր, որն, ըստ Դ. Թրամփի համոզման, արդեն վաղուց սպառել է իրեն մարդկության պատմության մեջ: